


ՀԱՅԿ. ԽՈՀ ԱՐ-ՌԴԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱԾ

Դոցելիս Բ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅՈՒՆ

# ՏՐԱՎՈՄԱՆ ՄԵԶ ՄՈՅ

ՅԵՎ

ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ



ՀԲԱՏՈՒԹՅՈՒՆ. ՀԿՈՀ ԱՐ-ՔՈՎԳԿՈՄՈՏԻ ՍՈՆ-ԼՈՒԾ ԲՈՋՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1937

617.7

15-48

1375

15f (p) - 15 nevsky, F.

Spur und Spur der Spur ist  
nun wieder verschwunden!


ՀԱՅԿ. ԻԽՍ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱԾ

617.711-002.291

ԴՈՑԵՆՏ Բ. ՄԵԼԻՔ-ՄՈՒՆՅԱՆ

Ա


ԱՎՈՒԴՎԱՆ է 1961 թ.

# ՏՐԱԽՈՄԱՆ ՄԵԶ ՄՈՏ

ՅԵՎ

ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

A 16742



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՍԱՆ-ԼՈՒՍ ԲԱԺՆԵ

ՅԵՐԵՎԱՆ

1937

Տեխ. ձեվ. յեվ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ԹԵԿԱՄ-ՀՐԱՏ. ԲՅՈՒՐՈ Պ. և 1452.

Քաղլիտ թ 767.

Հանձնված և արտադրության 25-ին նոյեմբ. 1937 թ.

Ստորագրված և տպադրութ. 15-ին դեկտ. 1937 թ.

Ական-Քանաքեռինի տօղարան, Յերևան.

Գատ. 17.

Տիրաժ 3000.

Խորհրդային առողջապահության հրատապ խնդիրներից մեկը՝ տրախոմայի դեմ պայքարն եւ մեզ մատ ևս այդ ուղղությամբ ծավալվում են աշխատանքները։ Այս աշխատության նպատակն եւ լայն մասսաներին ծանոթացնել, թե ինչ եւ տրախոման, ինչումն եւ կայանում նրա դեմ մըզվող պայքարը և ինչ միջոցներ պետք եւ ձեռնարկել տրախոմայով չվարակվելու համար։

Տրախոման կոպերի հիվանդություն եւ և նա գյուղըբրանելի կլինի այն ժամանակ, յեթե ընթերցողը գաղափար ունենա կոպերի կազմության մասին։

Կոպերը դրսից գեպի ներս կազմված են՝ մաշկից, մկաններից, կոճիկից և շարակցական հյուսվածքից։ Ամենաներսի շերտը կազմում եւ շարակցական հյուսվածքը. նա սկսվում եւ կոպի յեզրից, տարածվում եւ կոպի ամբողջ ներսի մակյերեսի վրա, ակնազնդի առջեկի հատվածի յետին մասում կազմում եւ մի ծալք, այսպես կոչված անցածալք. այստեղ փոխելով յուր դիրքը նա փուլում եւ ակնազնդի սպիտակուցի (կարծրենու) վրա, վորպես թափանցիկ, քնքուշ մի շղարշ և հասնում եւ ակնազնդի առջեկի մասում զետեղված փայլուն յեղջրենու յեզրին կամ ավելի ճիշտ, այստեղ կազմափոխվելով տարածվում եւ նաև թափանցիկ յեղջրենու մակյերեսի վրա։ Կոպերի վորոշ տարածության վրա այս շարակցական հյուսվածքը կազմում եւ անզեն աչքով անտեսանելի, մանրադիտակի տակ պտիկավոր արտահայտված թափշանման ծալքեր։

Կոպը յուր ձեւավորումն ստանում ե ակնագնդից. նա յուր մեջ պարունակում ե շարժիչ մկաններ, կոճիկ, անոթներ, ներվեր. նա շարժվում ե ակնագնդի վրա բաց ու խուփ անելով վերջինիս: Կոպերը պահպանում են աչքը արտաքին պատահարներից, թարմացնում են նրան իրենց մեջ յեղած ճարպագեղձերի, արցունքագեղձերի արտադրանքով ու լորձունքով և պահում են աչքը վորոշ ջերմաստիճանում:

Այն տարածությունը, վորը պատած ե շարակցական հյուսվածքով, սկսած կոպի յեզրից մինչև յեղջբենու յեզրը, այլ խոսքով, կոպի և ակնագնդի արանքը, կոչվում ե կոնյունկտիվալ պարկ:

Առանց կոնյունկտիվալ պարկի, ակնագունդն անկարող ե պահպանել յուր նորմալ գործունեյությունը: Կառուցվածքի, հյուսվածքի, նրբության և համապատասխան ջերմության շնորհիվ կոնյունկտիվալ պարկը հանդիսանում ե մի միջավայր, ուր հաճախ առաջ են գալիս բազմաթիվ հիվանդություններ: Գտնելով լավ սննդի ու աճի նպաստավոր պայմաններ, այստեղ կարող են բազմանալ 60-ի չափ գտնազան մանրեներ: Սրանցից շատերի համար կոնյունկտիվալ պարկը սպեցիֆիկ միջավայր ե հանդիսանում նաև այն ժամանակ, յերբ այլ խոռոչներում, այլ լորձաթաղանթների վրա տվյալ մանրեներից շատերը չեն աճում չեն բազմանում, հիվանդություններ չեն առաջացնում. կոնյունկտիվալ պարկում, ընդհակառակ նրանք փարթամ աճում են և չափազանց ծանր հիվանդությունների հարուցիչները դառնում: Հատկապես կոնյունկտիվալ պարկում լավ աճում են՝ կոխ-վեկտի, Մորաքս-Ակսենֆելդի, պնէվմոնիայի, դիֆտերիայի, գոնորրեայի (տրիպերի) մանրեները: Սրանք կոնյունկտիվալ վրա առաջացնում են բորբոքումներ, այսպես կոչված կոնյունկտիվիտներ:

Այս հիվանդություններից մի քանիսն ընդունակ են տարածվել յեղջրենու վրա, քայլայել նրան, խոցոտել և աչքը հասցնել կուրության. մյուսներն ընդհակառակը, թեպետ և չեն տարածվում սովորաբար յեղջրենու վրա, այլ կղզիանում են միայն կոնյունկտիվայի վրա, բայց ցավոտ ու տանջալից են հիվանդի համար:

Կոնյունկտիվայի բորբոքումները լինում են սուր, կարձատե, կամ քրոնիկ, յերկարատե: Վարակվելուց շատ չանցած կոպերն ուռչում են, կարմրում, առաջ են դալիս ուժեղ արտադրուկ, արցունքահոսություն, թարախ, ցավ. հաճախ հիվանդը դժվարությամբ է բացում աչքերը, գրժվարությամբ նայում լույսին, ճրագին. նրան տիրում է այն զգացումը, թե կոպերի արանքը հող, մոխիր, ավազ է լցված: Այս յերեսույթը արգելք է հանդիսանում կոպերի կանոնավոր բաց ու խուփ անելուն. յերբեմն ուռած կոպերը դժվարությամբ բանալիս թարախ, առատ արցունք է հոսում: Ակնազնդի կոնյունկտիվայի տակ, կարծրենու վրա, յերբեմն առաջ են դալիս արյան գեղխութեր:

Կոնյունկտիվայի բորբոքումը աչքի համար վտանգավոր է գառնում այն գեղքում, յերբ հիվանդությունը տարածվում է յեղջրենու վրա:

Այս տեսակեաից չափազանց վտանգավոր են գնորդեայի (տրիպերի), թոքերի բորբոքման մանրեներից առաջացած բորբոքումները, վորոնք տարածվելով յեղջրենու վրա, շատ հաճախ առաջացնում են խոցեր, պատովածքներ. այստեղ թարախող բորբոքումը յերբեմն տարածվում է ակնազնդի մյուս շերտերի վրա: Այս բարդությունները հետազայում կարող են յեղջրենու վրա սպիացումներ առաջացնել (ժողովրդական լեզվով առած՝ «հատ» գցել), առաջ բերել աչքի արտափում,

աշքի և ակնակապիճի միատեղ բորբոքում ու սրան  
հաջորդող հետաձում։ Այսպես են ընդհանուր տվյալներով  
կոնյունկտիվիտները։

Կոնյունկտիվայի յերկարատև, համառ, տանջալից,  
բարդություններով հարուստ, աչքի համար կորստաբեր ու  
ծանր հիվանդություններից վատթարագույնը՝ արախո-  
ման է։

Շատերը գիտեն առրախոմայ բառը, բայց քչերը միայն  
ճիշտ գաղափար ունեն նրա մասին։ Վոմանք պատկերա-  
ցնում են տրախոման, վորպես մի հիվանդություն, վորով-  
վարակվելով մարդիկ անմիջապես կուրանում են, մյուռ-  
ներն, ընդհակառակը, յենթազրում են, վոր տրախոման  
անմեղ մի հիվանդություն ե, ուստի և արժանի չե առան-  
ձին ուշագրության, մանավանդ, վոր նա սովորական յե-  
րեւոյթ ե ու բավականին տարածված։

Սխալ են յերկու դեպքումն ել տրախոմայի մասին  
յեղած այս կարծիքները։ Նման հասկցողությունները  
նողաստում են միայն տրախոմայի անարգել տարածմանը։

Վարակիչ հիվանդությունների շարքում, տրախոման  
մարդկության մեծագույն չարիքներից մեկն է։ Հազարա-  
վոր կիսակույր կամ բացարձակ կույր մարդիկ զոհ են  
դարձել տրախոմային։ Այս հանգամանքը հրամայական պա-  
հանջ ե զնում մեր առաջ՝ ծանոթացնել ազգաբնակության  
լայն խավերին՝ թե ինչ ե տրախոման, վորոնք են նրա  
տարածման պատճառները և ինչպես պետք ե պայքարել  
նրա դեմ։

Տրախոման, առաջին հերթին, կոնյունկտիվայի հիվան-  
դություն ե։ Նա կամ սկսվում ե ուժեղ և սուր յերե-  
վույթներով, կամ հիվանդագին յերեվույթների ան-  
նշան արտահայտության շնորհիվ, հիվանդի համար մնում ե

անդգալի ու աննկատելի: Սուր արտահայտված տրախոման  
մեծ մասամբ զուգորդվում ե վորևե այլ սուր կանյունկ-  
տիվիտի հետ և ընդհանուր առմամբ, սկզբում վոչնչով չի  
տարբերվում վերջինից կամ ավելի ճիշտ, քողարկվում ե  
սպորական կոնյունկտիվիտի յերեսույթներով. կոպերն  
ուռչում են, լորձաթաղանթը բորբոքվում, արտադրուկը  
առում ե և փոխվում թարախի, ծանրացած կոպերը դըժ-  
վարությամբ են բացվում, ցավը, արցունքահոսությունը,  
հաճախ լուսավախությունը դառնում են անխուսափելի:  
Վորոշ ժամանակից հետո այս յերեսույթներն աստիճանա-  
բար տեղի յեն տալիս, անցածալքի կոնյունկտիվայի վրա  
արտահայտվում են հատիկներ՝ կորեկից մեծ կամ փոքր-  
սրանք բժշկական լեզվով կոչվում են ֆոլիկուլներ: Յեր-  
բեմն տեղի յէ ունենում կոնյունկտիվային թափանման  
մասի աննկատելի պտիկների ուժեղ դերաձում: Ֆոլիկու-  
լներն սկզբում գերակշռում են կամ արտահայտվում են  
միայն անցածալքի վրա, իսկ հետո տարածվում են նաև  
ամբողջ կոպի կոնյունկտիվայի վրա: Նրանք վորոշ ժա-  
մանակ փարթամ աճում են, իսկ հետո սկսում են կամ  
ներծծվել կամ ճեխքվել: Նրանց պարունակությունը դուրս  
է թափվում և նրանց փոխարինում են մանր, քնքուշ,  
գունատ կոնյունկտիվայի վրա սմննշան տարածված փոք-  
րիկ սպիներ: Վորքան հնանում ե տրախոման, այնքան  
ավելի յեն շատանում սպիները և ընդհակառակը, քանա-  
կապես քշանում և աճով նվազում են ֆոլիկուլները. այս-  
պիսով աստիճանաբար վերջիններս անհետանում են, տե-  
ղի տալով համատարած սպիներին ու գալիս ե վերջապես  
մի ժամանակ, յերբ տրախոմայից քայքայված, կազմա-  
փոխված կոնյունկտիվան այլև անդոր և գառնում նորա-  
նոր ֆոլիկուլներ առաջացնելու:

Շատերը յենթադրում են, վոր կոնյունկտիվայի սպիա-  
ցումով և ֆոլիկուլների անհետացումով վերջանում ե  
նաև տրախոմայի հիվանդագին ընթացքը. բայց դա

սխալ եւ Տրախոման զեռ ևս յերկար ժամանակ բուն դրած լինելով կոպի խորը շերտերում, այստեղ ևս առաջցնում ե Փոլիկուլներ—կազմափոխում հյուսվածքը, ծըռմը ու այլանդակում կոճիկը, ձևափոխում ամբողջապես կոպը։ Յերբեմն տրախոման այնքան մեղմ ե արտահայտվում, վոր նույնիսկ անզգալի և աննկատելի յէ մնում հիվանդի համար։ Նա հայտաբերվում ե միայն բժշկի կողմից, յերբ վերջինս այլ պատճառներով քննության ե յենթարկում աչքը։ Տրախոմայի այս ծպտյալ դրությունը նմանում ե այն թոքախտին, վորը տարիների ընթացքում յուր քայրայիշ գործը կատարելուց հետո՝ միայն հայտաբերվում ե բժշկի քննությամբ։ Վերհիշեմ մի դեպք՝ ջարդվածքի պատճառով անհրաժեշտ եր հեռացնել մի հիվանդի աչք։ այս անակնկալ դժբախտությունը առիթ հանդիսացավ, վոր աչքը քննելիս, հայտաբերվեց նաև տրախոման, վորը թեղետ և տարիների ընթացքում բազմաթիվ սպիներ եր առաջացրել կոնյունկախվայի վրա, բայց հիվանդըն այդ մասին բնակ գաղափար չուներ և չեր ել բուժվել։ Ակնազնողի անխուսափելի հեռացումը՝ նիրհող տրախոմայի վերանորոգման առիթ հանդիսացալ. ոպերացիայից դեռ ևս յերկար ժամանակ անց հիվանդը բուժվում եր տրախոմայի զեմ։

Սովորաբար տրախոման բաժանում են յերեք շրջանի՝

Առաջին շրջանին համապատասխանում ե հիվանդության սկզբնական ժամանակամիջոցը, յերբ շարակցական հյուսվածքը քիչ թե շատ հաստացած ե, քիչ են Փոլիկուլների քանակը կամ պտկիկների գերածը։

Յերկրորդ շրջանը բնութագրվում ե տրախոմայի փարթամ աճով, բորբոքային յերեսույթների ուժեղ արտահայտությամբ, մեծ քանակությամբ ֆոլիկուլներով, յերբեմն պտկիկների զգալի գերածով։

Յերրորդ շրջանը հատկապես բնութագրվում ե սպիացումով։

Միւնույն հիվանդությունը տարբեր մարդկանց մոտ զանազան արտահայտություն, ընթացք և հետևանքներ կարող ե ունենալ: Մեկի նկատմամբ հիվանդությունն արտահայտվում ե մեղմ ընթացքով, բարենպաստ վախճանով ու աննշան հետևանքներով. մյուսի վերաբերյալ՝ ուժեղ, ցայտուն, քայլայիչ ընթացքով և անջնջելի հետևանքներով: Անկառիկած պատահականություն չե այս: Ուշադիր մասնագետի մանրազննին ու բազմակողմանի քննությունները պարզում են, վոր այս խնդրում հսկայական նշանակություն ունի որդանիզմի ուժի անհատական չափը, կենսունակությունների ազդեցությունը, կենցաղի ու սննդի պայմանները, աշխատանքի բնույթը, որդանիզմի կառուցվածքը, հիվանդի տարիքը, ժառանգական հատկությունները և այլ բազմաթիվ մոմենտներ:

Ուսումնասիրելով այդ բոլոր պատճառները, բժիշկը ի վիճակի յե լինում, հնարավարության սահմաններում, կանխորոշել հիվանդության ընթացքը, վախճանը, հետեւ վանքները: Այս իսկ ազդակների շնորհիվ, որդանիզմի և հիվանդության մեջ տեղի ունեցած պայքարում՝ մի գեպքում հաղթող ե հանդիսանում որդանիզմը, մի այլ գեպքում՝ հիվանդությունը:

Այս տեսակետից, բացառություն չի կազմում նաև տրախոման: Տրախոմայով վարակվելիս հիվանդության պրոցեսը մեկի նկատմամբ սահմանափակվում ե միայն կոպի կոնյունկտիվայի սպիացումներով, առանց այլ բարդություններ ու խանգարումներ առաջացնելու տեսողական ապարատի գործունեյության մեջ, իսկ մի այլ գեպ-

քում՝ տրախոման խոր քայքայումներ առաջացնելով կոն-  
յունկտիվայի վրա, տարածվում է կոճիկի վրա, կազմա-  
փոխում, քայքայում նաև նրան, այլանդակում կռպը:

Հաճախ կռպի կոնյունկտիվայի վրա տեղի ունեցած  
սպիացումներից փակվում են արցունքագեղձերի, ճարպա-  
գեղձերի ծորանները, աչքը զրկվում է թարմանալու բնա-  
կան ընդունակությունից, հետզհետե չորացման մատնվում,  
յեղջրենին պատռմ է նորագոյացող անթափանցիկ  
հյուսվածքով, կորցնում է յուր փայլը, ճառագայթներ բե-  
կելու ընդունակությունը, վորից և առաջ ե գալիս տեսո-  
ղության աստիճանաբար նվազում, կամ նույնիսկ բացար-  
ձակ կուրություն:

Նույն սպիացումների պատճառով հաճախ կռպը կորց-  
նում է յուր նորմալ ձևը, կազմությունը, ծոմովում է  
դեպի ներս, հիվանդությունը տարածվում է արտևանունք-  
ների մազարմատների վրա, փոխում կռպի ու ամբողջ յեղ-  
ըի գիրքը, ազդում արտևանունքների աճի վրա: Վերջին-  
ներս կորցնելով իրենց կանոնավոր ուղղությունը, խըր-  
փում են դեպի ակնագունդը. յերրեմն կռպի և ակնագնդի  
կոնյունկտիվայի վրա տեղ-տեղ առաջանում են կպումներ  
և այդպիսով սահմանափակում աչքի շարժումները:  
Այս բոլորը նպաստում ե յեղջրենու հարատե քերվելուն,  
տրորվելուն, քերծվելուն. Փիզիկապես այս կերպ տրորված  
յեղջրենու վրա հեշտությամբ տարածվում է տրախոմայի  
վարակը. այստեղից սկսվում է տրախոմա հիվանդության  
վատթարագույն ետապը: Այն ժամանակ, յերբ տրախոման  
տարածված եր միմիայն կոնյունկտիվայի վրա, նա հիվան-  
դի համար զգալի յեր միայն ցավով, իսկ այն որվանից,  
յերբ տրախոման տարածվում է նաև յեղջրենու վրա,  
սկսվում է տեսողության աստիճանաբար թուլությունը:  
Այդ որվանից տրախոման հանդիսանում է աչքի քայքա-  
յողը, նրա անմիջական ու վատթարագույն թշնամին:

Յեղջրենու տրախոմատող բորբոքումը անվանվում է  
պաննուս, յերբ յեղջրենին պատում ե անոթներով, պղո-  
րութիւններով, հաճախ յեղջրենու յերեսը, բառի բուն իմաս-  
տով, մսակալվում եւ թեթև արտահայտված պաննուսը, յեր-  
բեմն կարող ե շուտով ներծծվեր, բայց հաճախ նա ուժգը-  
նորեն վերանորոգվում եւ և տեսում յերկար ու համառ:  
Դժբախտությունը նրանումն ե, վոր ինչքան ել առանձին  
դեպքերում կարճատե լինի պաննուսի տեսողությունը,  
այնուամենայնիվ, նա անջնջելի հետքեր ե թողնում յեղ-  
ջրենու վրա. վերջինիս վրա առաջանում են զանազան  
մեծության, խորը կամ մակերեսային սպիտակ անթա-  
փանցիկ սպիներ (այսպես կոչված «հատեր»). յեղջրենին  
դառնում ե խորդ ու բորդ, լույսի ճառագայթներն ընկ-  
նելով այդպիսով կազմափոխված յեղջրենու վրա, փոխա-  
նակ ըեկվելու ու ներս թափանցելու, ցըվում են և աչքը  
այդպիսով կորցնում ե տեսնելու ընդունակությունը, թե-  
պետ և նա մնացածում բոլորովին առողջ եւ: Քանի դեռ  
տրախոման գոյություն ունի կոպերի վրա, վերջնականա-  
պես կանխել պաննուսի կրկնվելը, դժվար ե. իսկ այս հի-  
վանդության յուրաքանչյուր կրկնությունն ավելի ու  
ավելի յե բարդացնում հիվանդ աչքի զբությունը, ել ա-  
վելի կազմափոխում յեղջրենին, ել ավելի անդրադանում  
տեսողության վրա, կամ հաճախ բացարձակ կուրա-  
ցնում աչքը:

Բացի պաննուսից, տրախոմայի ժամանակ յեղջրենու  
վրա կարող են առաջանալ զանազան մեծության ու խո-  
րության խոցեր. անջնջելի են նաև նրանց հետքերը, ան-  
խուսափելի սպիտացութիւնները: Եերբեմն յերկարատե հիվան-  
դությունից հետո, յեղջրենին դառնում ե քայլայված  
կամ արտափրված, գնդաձե. այս բոլորը նույնպես անխու-  
սափելիորեն հասցնում են աչքը կուրության:

Յեթե չինեն յեղջրենու վրա տրախոմայից առաջացած  
այդ բարդությունները, ապա և տրախոման կորստաբեր  
չեր լինի աչքի համար. միայն սրա շնորհիվ ե, վոր տրա-  
խոման հանդիսանում ե մարդկության համար մեծագույն  
չարիքներից մեկը. Զափազանց մեծ ե տրախոմայից առա-  
ջացած կույրերի քանակը յերկրագնդի վրա: Վիճակագրա-  
կան տվյալներից պարզվում ե, վոր անցյալում, ցարական  
Ռուսաստանում տրախոմայից առաջացած կույրերի քա-  
նակը կազմում եր յերկրի բոլոր կույրերի 22 տոկոսը:  
Կուրություն առաջնորդ հիվանդությունների շարքում  
տրախոման գրավում ե առաջին տեղը: Անկասկած, ուր  
շատ ե տարածված տրախոման, այնտեղ ել ավելի յե տրա-  
խոմայից առաջացած կույրերի քանակը:

---

Գոյություն ունեն հիվանդություններ, վորոնց վարա-  
կիչ լինելը, թեպետ վաղուց ե ապացուցված, բայց նրանց  
հարուցիչները զեռ ևս վերջնականապես չեն հայտա-  
բերված: Սրանցից շատերը այնքան մանր են, վոր սովո-  
րական մանրադիտակի տակ նրանց տեսնելն անկարելի յե,  
այս պատճառով ել նրանք կոչվում են անդրմանրադիտա-  
կային (ուլտրամիկրոսկոպիկ) մանրեները: Այսոր բժշկու-  
թյունը գալիս ե այն յեզրակացության, վոր տրախոման  
ևս, հավանորեն, պատկանում ե այն տեսակի վարակիչ  
հիվանդություններին, վորոնց հարուցիչ մանրեներն ուշ-  
տրամիկրոսկոպային լինելու պատճառով, դեռ ևս վերջ-  
նականապես հայտաբերված չեն:

Անկասկած արախոմայի հարուցիչի այս ծպտյալ դը-  
րությունը հրամայողական պահանջ ե գնում մեր առջև,  
ել ավելի աչալուրջ լինել դեպի նա, ավելի խօրն ուսումնա-  
սիրել նրա վարակման ուղիները և լայնացնել չվարակ-  
վելու հարավորությունները:

Դեռ ևս 2000 տարի մեզանից առաջ, մարդիկ գետելին տրախոման, դարերի փորձը բժիշկներին ցույց ետվել նրա վարակիչ լինելը։ Ապացուցված է, վոր մարդիկ վարակվում են տրախոմայով հիվանդ աչքի արտադրուկի, ֆոլիկուլների պարունակության միջոցով, յեթե նրանք այս կամ այն ճանապարհով ընկնեն առողջ աչքի կոնյունկտիվալ պարկը։ Սա յե պատճառը, վոր շփումը հիվանդի հետ, անմիջական առընչությունը հիվանդ աչքի հետ, ձեռքի, շորեղենի, ամանեղենի, զգեստի, անկողնու, կահկարասիքի, մի խոսքով այն բոլորի միջոցով, ինչ ձեռք ե տալիս հիվանդը, անգիտակցաբարնրա վրա տարածելով յուր հիվանդ աչքի արտադրուկը՝ ձեղքվող ֆոլիկուլների պարունակությունը, այս ամենի միջոցով վարակը աննկատելի կերպով տարածվում ե մեկից-մյուսին։ Տրախոման ևս այլ վարակիչ հիվանդությունների նման ունի յուր գաղտնի (ինկուբացիոն) շրջանը։ Ապացուցված է, վոր վարակվելուց 8—14 որ հետո, հայտաբերվում են տիպիկ տրախոմայի յերեվույթները։ Այս ե պատճառը, վոր հաճախ վարակվողը սկզբում չի յել դիտակցում, վոր ինը վարակվել ե։ Տրախոմայի բուժման ձևերից մեկը՝ վորոշ գործիքով ֆոլիկուլների արտաճնչելն ե։ Յեթե պատճամամբ արտաճնչված նյութից մի կաթիլ անզամ ընկնի առողջ աչքի կոնյունկտիվայի վրա, վարակը կլինի անխուսափելի։ Սա ապացուցված է վորձով, յերբ անզգուշ արտաճնչման ժամանակ, բժիշկը պատճամամբ վարակել ե իր աչքը հիվանդի մի կաթիլ արտադրուկով։ Այն ընտանիքներում, վորտեղ մի յերեսսրբիչից ոգտվում են մի քանի հոգի, վարակը դառնում ե անխուսափելի, յեթե այդ ընտանիքում վորեւ մեկը տառապում ե տրախոմայով։

Այսպիսով պարզ եւ և ըմբռնելի, թե ինչ կերպ և  
ինչ ճանապարհներով են մարդիկ տրախոմայով վարակվում։  
Այս իմանալուց հետո, կարծես դժվար չե զգուշանալ և  
չվարակվել։ Բայց չնայած դրան, դարերի ընթացքում մար-  
դիկ զուրկ են յեղել աչքը վարակից պաշտպանելու տար-  
րական հնարավորություններից և տրախոման անպատճ-  
տարածվել ու բուն ե դրել մասսաների մեջ, զրկել տեսո-  
ղությունից հազարավոր մարդկանց։

Մի շարք հիվանդութունների շարքում, տրախոման ևս  
անցյալում կոչվելիս ե յեղել «աղքատի հիվանդություն»։  
պատահական չե սա. ուր կենցաղային ծանր պայմաններն  
են իշխել, ուր տգիտությունն ե տիրել ուրիշ վարակիչ հի-  
վանդությունների նման, տրախոման ևս տարածվել և  
յուր առատ հունձն ե արել։

Մասսաների կեղեքումն ու շահագործումը, քաղցը,  
պատերազմը, ծանր աշխատանքը, հակասանիտարական պայ-  
մանները, ահա այն հիմնական պատճառները, վորոնց շնոր-  
հիվ տրախոման տարիների ընթացքում տարածվել ե նաև  
մեղ մոտ—անցյալի դժնդակ պայմաններում։

Ոգտագործելով միենույն սրբիչը, անկողինը, զա-  
նազան պիտույքներ, հագուստեղենը, ապրելով հակասա-  
նիտարական բնակարաններում և նյութական ծանր պայ-  
մաններում—այսպիսի անցյալում տառապող մասսան վոչ  
հնարավորություն, վոչ ել ժամանակ ուներ հոգալու յուր  
առողջությունը պահպանելու տարրական խնդիրների  
մասին։ Տիրող այս պայմանները, մինչ յերկրի խորհրդայ-  
նացումը, առատ հող են պատրաստել և լայնորեն տարա-  
ծել տրախոման մասսաների մեջ։

Տրախոմայի որբանը հնուց ի վեր հանդիսացել է Յեղիպտոսը: Վիճակադրական տվյալների համաձայն, այսոր ևս Յեղիպտոսի ազգաբնակության 90 տոկոսը տառապում է տրախոմայով: Այն հանդամանքը, վոր կույրերի քանակը Յեղիպտոսում անհամեմատ ավելի մեծ է, քան մի այլ յերկրում, մի ավելորդ՝ անզամ ևս ապացուցում է, վոր սրա պատճառը տրախոմայի չափազանց տարածված լինելն է այդ յերկրում:

Քիչ չե նաև տրախոմայով հիվանդների քանակը հարեվան Թյուրքիայում, Իրանում և այլ յերկրներում: Այս յերկրների բժիշկները հնուց ի վեր գիտեյին տրախոման և նրա բուժման վորոշ միջոցները:

Դեռևս մեծ է նաև մեր յերկրում տրախոմայով տառապող այն հիվանդների քանակը, վորը ժառանգություն ենք ստացել անցյալից: Անցյալի քաղաքական և կենցաղային ծանր պայմանները անջնջելի հետքեր են թողել մեր ժամանակի մարդկանց շատերի աչքերին: Դժբախտաբար այս ուղղությամբ անցյալում և վոչ մի հաշվառում չի կատարվել և դժվար է պատկերացնել, թե ինչ չափերի կը համեմ տրախոմայով հիվանդների քանակը մեղ մոտ, յեթե լիներ յերկրի խորհրդայնացումը:

Միջին դարերում արևելքի և արևմուտքի քաղաքական ու անտեսական գոխնաբարերությունները ևս իրենց հերթին անդրադարձել են և նպաստել տրախոմայի տարածմանը մեր յերկրում:

Միջազգային առևտրական ճանապարհների վրա գրանցվող քաղաքները՝ Անին, Կարսը, Դիլինը և այլն, յեղել են այն հանգուցային կետերը, վորոնց վրայով արևելքից արևմուտք և ընդհակառակը, գոխազրվել են բեռնակիր քարավաններ, աշխարհականների զինված բանակներ. այդ քաղաքներումն են կուտակվել արտահանման համար շրջաններից հավաքած հումքը և զանազան ապրանքները, նույն քաղաքներով են ներմուծվել յեղած ապրանքները:

Այս պատճառով բազմաթիվ հիվանդությունների նըման, տրախոման ևս շատ հաճախ աղատ յելք ու մուտք ե ունեցել և տարածվել յերկրում: Ֆեղալական ասպատակությունները, միջին դարերի կյանքն ինքնին նպաստել են տրախոմայի տարածմանը Նույնանման նշանակություն և գուցե ավելի ազդեցություն ունեցել ու նպաստել տրախոմայի տարածմանը ցարական կառավարության ու դաշնակների կողմից մասսաների սանձարձակ շահագործումն ու կեղեքումը:

Ցարական իշխանությունից և դաշնակներից մնացած արխիվային նյութերի մեր վերջին տարիներիս ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչ չափերով և տարածված յեղել տրախոման մեր յերկրում: Հի յեղել մի շրջան, վորը զերծ մնացած լիներ տրախոմայի վարակից: տարբերությունը միայն քանակի մեջ է յեղել:

Ներկայիս մեր հետազոտությունները ցույց են տալիս, վոր խորհրդային իշխանության ձեռք առած միջոցների շնորհիվ, տրախոմայի հիվանդության տոկոսը զգալիորեն իջել է, սակայն մի շաբթ շրջաններում տրախոման շարունակում է գեռ գոյություն ունենալ այս կամ այն չափով:

---

Ինչպես այլ վարակիչ հիվանդությունների, այնպես ել տրախոմայի նկատմամբ պայքարն ընթանում է յերկու ուղղությամբ՝ բուժման և նախազգուշացման (պրոֆիլակտիկ):

Բուժելի յե արդյոք տրախոման. այս կերպ են դնում հարցը, մանավանդ, այն հիվանդները, վորոնք տարիներով, տաճայակ տարիներով տառապել են տրախոմայով:

Յեթե տրախոմայից բոլորովին չեն բուժվել, կամ բուժվել են չափազանց անկանոն ու թերի, կամ բժշկի յեն դի-

մել կույր կամ կիսակույր վիճակում, խոսք անդամ  
չի կարող լինել այն մասին, վոր բացարձակապես կազ-  
մալուծված ու քայքայված որդանը վերականգնել անկարելի  
յէ: Յուրաքանչյուր որդան բուժման յենթակա յէ միայն  
այն դեպքում, յերբ նա դեռ ևս իր մեջ պարունակում է  
քիչ թե շատ կենսունակություն և հյուսվածքի գոնե մաս-  
նակի առողջ դրություն: Բնական ե, վորքան հնացած լի-  
նի պրոցեսը, այնքան յերկար ու համառ կլինի նրա բու-  
ժումը:

Ցավալին այն ե, վոր յերբեմն բուժումը կիսատ են  
թողնում այն հիվանդները, վորոնք լրիվ հնարավորություն  
ունելին բուժումով աղատվելու տրախոմայից, յեթե դեռ ևս  
առանձին կազմափոխումներ և քայքայումներ չեն առա-  
ջացրել ակնազնդի վրա: Այս կարդի հիվանդներից վոմանք,  
յերբ վորևե չափով իրենց լավ են զգում, յերբ նվազում,  
կամ անհետանում են հիվանդության սուբյեկտիվ զգա-  
ցումները, անտեղյակ լինելով բժշկությունից, համարում  
են իրենց առողջացած և ընդհատում բուժումը: Անկաս-  
կած շատ չանցած, այդպիսի դեպքերում տրախոման վե-  
րանորոգվում ե, հիվանդագին յերեսույթները վերստին  
կրկնվում են ու դրությունն ել ավելի յէ բարդանում,  
իսկ հետևանքներն ավելի չարաբաստիկ դառնում: Այս ա-  
մենն ել ավելի յէ վհատեցնում հիվանդին, ել ավելի հի-  
ասթափում բուժումից: Զակետք ե մոռանալ, վոր տրա-  
խոման համառ ու յերկարատև հիվանդություն ե, ուստի  
և պետք ե բուժվել այնքան ժամանակ, ինչքան բժիշկը  
անհրաժեշտ կհամարի: Հիվանդության ընթացքում հոկա-  
յական նշանակություն ունի նաև հիվանդի կենցաղը: չա-  
փազանց վտանգավոր ե հիվանդի համար անքնությունը,  
խմիչքը, զեխ կյանքը, գերաշխատանքը, տեսողության ու-  
ժեղ լարումը, աշխատանքի միջավայրում լույսի պակասը,

փակ միջավայրը, ծուխը, փոշին, զանազան գոլորշիների ու գաղերի ազդեցությունը և այն և այլն:

Ընթերցողի համար հետևողական և նույնչափ անհրաժեշտ հարց ե, թե վարակիչ ե արդյոք տրախոման և ինչ ճանապարհով ե այդ վարակը տարածվում:

Տրախոման չափազանց վարակիչ հիվանդություն ե. վարակը տարածվում է հիվանդի հետ անմիջականորեն շփելու միջոցով, շորեղենի, զգեստի, գործիքների, զանազան պիտույքների, անկողնու և այլ իրեղենների միջոցով։ Մի խոսքով այն բոլորի միջոցով, վորին ձեռք ե տալիս հիվանդը յուր աչքերի արտադրուկով, արտաշընչված ֆոլիկուլների հյութով, անզգուշաբար կեղտոտած և չվացած ձեռքերով։ Վարակվելու համար անհրաժեշտ չե, վոր այդ արտադրուկի, ճպաւոփ, թարախի քանակը շատ լինի, նկատելի, բավական ե, վոր նա լինի աննշան քանակությամբ, թեկուղ և քսվի միայն ու չորանա իրեղենի, ձեռքերի վրա և այս կամ այն ճանապարհով նույն շորեղենի կամ նույն ձեռքերի միջոցով ընկնի առողջ աչքի կոնյունկտիվալ պարկը. վարակը կլինի անխուսափելի և կարծ ժամանակից հետո՝ հիվանդությունն ակնհայտ։ Ահա թե ինչու, յուրաքանչյուր մարդ անպայման պետք ե ունենա յուր առանձին սրբիչը, յուր շորեղենը, զգույշ լինի շփումից այն ամենի հետ, ինչի ձեռք ե տալիս անզիտակից հիվանդը յուր անլվա, կեղտոտ ձեռներով և այդպիտով առանց հասկանալու, տարածում վարակը։ Տրախոման ամենից շատ վարակիչ ե յուր առաջին և յերկրորդ շրջաններում, այսինքն այն ժամանակ, յերբ արտադրուկը, ճըպուռը շատ ե, յերբ մի կողմից աճում են նորանոր ֆուլիկուլներ, իսկ մյուսները ձեղքվում. և ընդհակառակը, վարակն ավելի քիչ ե կամ հաճախ բոլորովին բացակայում ե տրախոմայի վերջին շրջանում, յերբ կոնյուն-

տիվան պատած ե միայն սպիտակ և այլ ևս թարախ  
կամ արտադրուկ չի տալիս:

Այս բացատրությունից հետո հասկանալի յե, վոր  
անհրաժեշտ ե արախումայով հիվանդին, մանավանդ հի-  
վանդության առաջին և յերկրորդ շրջաններում, ըստ ամե-  
նայնի մեկուսացնել և նրան կանոնավոր բուժել: Սա ան-  
հրաժեշտ ե մանավանդ այն ժամանակ, յերբ հիվանդը  
դժունվում է արդյունաբերական վայրում, գործարանում,  
արհեստանոցում, խանություններում և այլ տեղ, ուր իր աշխա-  
տանքի բերումով անմիջական կապ ունի ուրիշների հետ.  
Նրա բուժումն անհրաժեշտ է, թե իրեն՝ հիվանդի համար,  
վորովճետե նա կաղասի կուրանալու դժբախտ հեռա-  
նկարներից, և թե շրջապատի համար, վորովճետե դրանով  
նա նպաստած կլինի վարակից զերծ պահելու իրեն շրջա-  
պատող բազմաթիվ մարդկանց, վորոնց հետ կապ ունի  
աշխատանքի բնագավառում, գուրսը, ընտանիքում:

Պատահում են զեաքեր, յերբ միմիայն հանգիստը և  
խնամքը, մաքրությունը կամ նույնիսկ սղափոխությունը  
կարուել ու դրական ազդեցություն են գործում հիվանդի  
համար և բորբոքային սուր յերեվույթները տեղի յեն տա-  
լիս. սա նկատելի յե, մանավանդ պահնուսի ժամանակ,  
յերբ դեռ դեղորայքի չդիմած, յերբեմն հնարավոր ե լի-  
նում խնամքի միջոցով կանխել բորբոքային յերեսույթները:  
Անկասկած հսկայական նշանակություն ունի այն, թե  
յերբ և սկսվել բուժումը. վորքան շուտ, այնքան ավելի  
հեշտ կլինի նրա բուժումը և ավելի դրական՝ հետեւանք-  
ները:

Տրախումայի մասին ունեցած կասկածն անգամ բա-  
վական ե դիմելու մասնագետին, փարատելու կասկածը,  
յեթե այդպիսին չկա, և ընդհակառակը՝ բուժվելու, յեթե  
խսկակես կհայտաբերվի տրախուման:

Այսպես ուրեմն, հիվանդը պարտավոր ե խստիվ պահ-  
պանել և կիրառել այն բոլոր հրահանգները, վոր կտա

բժիշկը կենցաղի, աշխատանքի, խնամքի, մաքրության վերաբերյալ։ Նա պարտավոր ե յենթարկվել բուժման մինչև այն ժամանակը, յերբ բժիշկը կկարգադրի դադարել կամ ընդհատել բուժումը։ Նպատակահարմար ե բուժվելուց հետո ել դեռ յերկար ժամանակ գտնվել բժշկի հըսկողության տակ, պարբերաբար քննության յենթարկվել և դեկավարվել այն խորհուրդներով, վոր կտա բժիշկը։ Ուրեմն տրախոման բուժելի յե և վորքան շուտ, այնքան ավելի կարճ ժամանակում և ավելի հաջող։

Տըախոմայի դեմ պայքարի համար մեղ մոտ անցյալում վոչինչ չի արված, յեթե չհաշվենք այն մեկ թե յերկու բժիշկները, վորոնք ընդհանուր առմամբ, վորպես բուժող բժիշկներ, մասամբ զբաղվել են նաև ակնաբուժությամբ։

Մեր յերկիրը, մինչ խորհրդայնացումը գուրկ ե յեղել մասնագիտական ակնաբուժական ոգնությունից, հետևաբար և տրախոմայի դեմ պայքարի գործից։ Այս տեսակետից վոչ մի համեմատություն չի կարելի դնել այսորվագրության և անցյալի միջև։ Այսոր, Խորհրդային Հայաստանում կան 25 մասնագետ ակնաբուժներ, 30 մահճակալով ու ամբուլատորիայով ակնաբուժական կլինիկա, վորն յուր մասնագիտական լրիվ կահավորումով, որինակելի շենքով, գիտական և գործնական աշխատանքներով պատկառելի տեղ ե գրավում Միության ակնաբուժական այլ կլինիկաների շարքում։ Այստեղ, բացի բժշկական մասնագետ կադր պատրաստելուց, Առժողկոմատը 1937 թ. կազմակերպեց տրախոմայի դեմ պայքարող քույրերի կուրսեր, ուր հաջող ավարտեցին և տրախոմայի ավելի վարակված շրջանները գործուղվեցին՝ ինքնուրույն կերպով աշխատելու համար 30 ընթացավարտներ։ Հաջողությամբ վերջացած այս առաջին փորձը հնարավորություն է տալիս Ակնաբուժական կլինիկային, Առժողկոմատի անմիջական դեկավարությամբ, հետագայում ավելի ծավա-

լել այդ աշխատանքները, նոր կազմեր պատրաստելու մեր յերկրի կարիքները բավարարելու համար:

Տրախոմայի գեմ պայքարի գործում Ակնաբուժական կլինիկայի անմիջական ղեկավարությամբ 1936 թ. մասնագիտական բրիգադների միջոցով հետազոտվել և բուժողնություն և հասցվել տրախոմայով ավելի վարակված մեր 7 շրջանների 92 դյուզերին. կատարված են բազմաթիվ ոպերացիաներ, բուժված են տրախոմայով հիվանդ հաղարակոր մարդիկ: Այժմ, յերբ յերկրի տնտեսական, կուլտ-կենցաղային պայմանները հակայական չափով աճել են, յերբ յերջանիկ ու բերկրալի կյանքի հնարավորությունները լայնորեն բացված են մասսաների առաջ, տրախոմայի գեմ տանելիք պայքարի աշխատանքներն ու հնարավորությունները ևս մեծացել են: Սա ակնհայտ է նույն 7 շրջաններում տարած աշխատանքների բովանդակությունից ու վորակից: Բացի բուժ աշխատանքներից, այդ շրջաններում կազմակերպված են 162 զրույցներ, վորոնց ընթացքում տեղի յեն ունեցել տրախոմայի գեմ պայքարի վերաբերյալ բազմաթիվ կարևոր, հետաքրքրական և գործնական նշանակություն ունեցող հարցերի վերլուծում և ոլարգաբանում:

---

1936 թ. ամռանը Լենինգրադում տեղի ունեցավ ակնաբուժների Համամիլութենական 2-րդ համագումարը: Համագումարի հիմնական խնդիրներից մեկն եր—պայքարը տրախոմայի գեմ: Յելույթ ունեցան տասնյակ տարիների գործնական փորձ և թեորետիկ կոփվածություն ունեցող մասնագետներ: Բոլոր յելույթներում ընդգծվում եր, վոր պայքարը տրախոմայի գեմ կավիտալիստական յերկներում պետք է ընթանա կավիտալիստական կարգերի տապալման ուղղությամբ, իսկ խորհրդային յերկրում՝

ցիալիստական շինարարության ուղիներով։ Այսպիսով հաս-  
կանալի յե, վոր միայն անհատական բուժման միջոցով  
վերջ տալ տրախոմային մի յերկրում, անհնար եւ Տրախո-  
ման վերացնելու համար անհրաժեշտ ե լայն մասսայա-  
կան միջոցառումներ, կենցաղի լավ պայմաններ, աշխա-  
տանքի ապահով դրություն և ընդհանրապես մասսայա-  
կան կուլտուրական միջոցառումներ։ Բժիշկներից նա, ով  
ըմբռնեց խնդրի այս հիմնական դրույթը, ի վիճակի կվինի  
պայքարել տրախոմայի գեմ այնպես, ինչպես դա պա-  
հանջվում ե խորհրդային ակնաբուժից։

Կասկածից դուրս ե, վոր տրախոմայի գեմ պայքարի  
գործում ակնաբուժը, վորպես մասնագետ, պարտավոր ե  
գտնվել աշխատանքի առաջին շարքերում. եյական ե նույն-  
պես, վոր այդ պայքարում կարեոր ե խորհրդային հաստ-  
րակայնության ակտիվ ոժանդակությունը։ Այդ տեսակե-  
տից ցայտուն որինակ ե հանդիսանում Խորհրդային Զու-  
վաշիայի ներկա դրությունը։ Յարական կառավարության  
ժամանակվա հետամնաց այդ ժողովուրդը անցյալից ստա-  
ցել ե տրախոմայով հիվանդների հսկայական ժառանգու-  
թյունն Դեռ ևս Շ տարի սրանից առաջ Զուվաշիայի ազ-  
գաբնակության բավականին խոշոր տոկոսը տառապում  
եր տրախոմայով, սակայն վերջին տարիների ձեռնարկած  
մասսայական հսկայական ակտիվ միջոցառումներով, մաս-  
նագետների ու Զուվաշիայի հասարակայնության միատեղ  
լի ենտուզիազմով, այսոր տրախոմայով հիվանդների քա-  
նակն այդ յերկրում իջել ե յերեք անգամ։ Հաղթանակի  
այդ փողուն որինակը բարի նախանձ ու մեծ վողերու-  
թյուն առաջացրեց բոլորի մեջ։ Այն, ինչ ցարական կա-  
ռավարությունը անզոր եր կատարել տասնյակ տարիների  
ընթացքում, Խորհրդային Զուվաշիան ի վիճակի յեղակ  
կատարել կարճ ժամանակամիջոցում։ Զուվաշիան վաղը  
հայարտորեն կհայտարարի, վոր իր յերկրում տրախոման

լիկվիդացիայի յե յենթարկված։ Զուվաշիայի նախանձելի  
որինակը իրականացնել մեզ մոտ, արմատախիլ անել մեր  
յերկրից տրախոման, ահա այն հրամայական պահանջներից  
մեկը, վորը դրված է կատարելու Խորհրդային Հայաստա-  
նի մասնագետ ակնաբուժների և մեր հասարակայնության  
առաջ, վորպես կարևորագույն խնդիրներից մեկը։

---



2248


ԳԱԱ Հիմնարար Գիտ.



FL000992

ԳԻՆԸ ՅՈ ԿՈՊ.

ЦЕНА



Доцент Б. МЕЛИК-МУСЯН

О ТРАХОМЕ

и

БОРЬБЕ С НЕЮ У НАС

Изд. Сαι, Просвет, отд. НКЗдрава Арм. ССР  
ЕРЕВАН 1937